

**«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ
ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ»**

Թագուհի Հարությունյան

**Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Հետազոտական, փորձագիտական և կրթական կենտրոն**

Երեվան 2022

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կարգավորման պեղական հայեցակարգը

2021 թվականի հունիսի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 192.411 հաշմանդամություն ունեցող անձ, որից 8.861 երեխա¹:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանող թերևս ամենահիմնական փաստաթղթերից մեկն է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա): Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիան վավերացվել է 2010 թվականին, որով էլ անցում է կատարել հաշմանդամության բժշկական մոդելից հաշմանդամության սոցիալական մոդելի, իսկ 2021 թվականին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» նոր օրենքների ընդունումից հետո՝ հաշմանդամության ֆունկցիոնալության մոդելի: Կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները յուրաքանչյուր մասնակից պետությունում պետք է պահպանեն, ամրապնդեն, հաստատեն կամ ստեղծեն այնպիսի համակարգ, որը անհրաժեշտության դեպքում կներառի մեկ կամ մի քանի անկախ մեխանիզմ, որը կաջակցի, կպաշտպանի և կվերահսկի Կոնվենցիայի կիրարկումը: Հիշյալ պարտավորության իրագործման նպատակով՝ 2018 թվականի հունիսի 13-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի փոփոխությունների արդյունքում՝ 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին վերապահվեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության իրավասությունները: Կոնվենցիոն գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժին: Բաժինն ապահովում է պետական և

¹ <https://hhbsp.am/>

տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից հաշմանդամություն ունեցող անձանց խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանություն: Բողոքների հիման վրա և սեփական նախաձեռնությամբ քննարկումներից բացի, բաժինն ապահովում է նաև Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց գտնվելու վայրերի հաստատություններ այցերի՝ Պաշտպանի գործառույթների իրականացումը: Այս բաժինը համագործակցում է նաև ոլորտի հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հետ՝ աջակցելու հավասար հնարավորությունների, իրավունքներն ապահովող միջավայրի ձևավորմանն ու ամրապնդմանը: Նշված կարգավիճակով պայմանավորված՝ Պաշտպանն իրականացնում է ներպետական օրենսդրության՝ կոնվենցիայի դրույթների համապատասխանության մշտադիտարկում, պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր այն հաստատություններ, որտեղ հաշմանդամություն ունեցող մարդիկ կան, նպատակ ունենալով երաշխավորելու այնպիսի միջավայրի առկայությունը ուր կլինեն հավասար հնարավորություններ և իրավունքներ, կարող է իրացվել այդ անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը, ինչպես նաև կապահովվի որոշումների կայացման գործընթացում նրանց ինքնուրույնությունը և մասնակցությունը:

Էական ձեռքբերում էր սույն թվականի նոյեմբերի 16-ին ԱԺ-ի կողմից վերջիվերջո վավերացված Կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը: Վերջինիս վավերացման գործընթացը երկարաձգվեց, մասնավորապես 2020 թվականի հունիսի 11-ին Կառավարության թիվ 938-Ն որոշմամբ հավանություն արժանացավ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը, իսկ արդեն 2020 թվականի հոկտեմբերի 27-ի ՍԴՈ-1556 որոշմամբ² Սահմանադրական դատարանը գտավ, որ Արձանագրությամբ

² <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1556.pdf>

նախատեսված պարտավորությունները, լինելով հաշմանդամություն ունեցող անձանց՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով նախատեսված իրավունքները և հիմնական ազատություններն իրացնելուն ուղղված պաշտպանության մեխանիզմներ, լիովին համահունչ են Սահմանադրությանը: Սակայն, համաձայն «Միջազգային պայմանագրերի օրենք»-ի՝ Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ամբողջությամբ ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով:

Արձանագրությամբ սահմանվում են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայով նախատեսված իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, որոնց շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) ճանաչել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի հանձնառությունը՝ ստանալ և քննարկել իր իրավասության շրջանակում գտնվող անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ անունից՝ Հայաստանի Հանրապետության կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների խախտման զոհ լինելու մասին ներկայացվող հաղորդումները (հոդված 1, կետ 1),

բ) Արձանագրության 2-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի իրեն գաղտնի ներկայացված ցանկացած հաղորդմանը վեց ամսվա ընթացքում գրավոր բացատրություններ կամ պաշտոնական հայտարարություններ ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե՝ պարզաբանելով հարցը և իրավական պաշտպանության այն միջոցը, եթե այդպիսին առկա է, որը կարող էր ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության կողմից (հոդված 3): Այսինքն, Արձանագրությամբ սահմանվում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե անհատական գանգատ ներկայացնելու ընթացակարգ:

1. Իրազեկման միջոցառումներ՝ ուղղված կարծրատիպային և խտրական մոտեցումների վերացմանը

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մասնակից պետությունները պարտավորվում են անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայքարելու համար հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող, նաև սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար ավանդույթների դեմ կյանքի բոլոր բնագավառներում, բարձրացնելու իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների և նրանց ունակությունների վերաբերյալ: Կոնվենցիոն այդ պարտավորությունը իր ամրագրում է գտել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 7-րդ հոդվածում համաձայն որի (.....) հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից են խտրականության բացառումը, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպերի, նախապաշարումների վերացումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական և կարծրատիպային մոտեցումների վերացումը նախ պետք է սկսել *նորմատիվային դաշտի վերանայումից*: Հաճախ կարծրատիպերի և սովորույթների ձևավորման համար հիմք է հանդիսում արատավոր իրավական պրակտիկան: Այս խնդիրներին տարիներ շարունակ անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներում³:

Ուսումնասիրությունը վկայում է, որ նախորդող մի քանի տարիների տարեկան հաղորդումներում Պաշտպանի կողմից հիշատակվող իրավական ակտերից որոշները

³ <https://www.ombuds.am/images/files/8636c95ac7349cbe5d51ff372cbcd8cc.pdf>
<https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>
<https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf>

վերանայվել են, ինչպես օրինակ՝ «Նոտարիատի մասին» օրենքի փոփոխությունների արդյունքում օրենսդիրը այլևս չի օգտագործում այնպիսի եզրույթներ, որոնք ընդգծում հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունից մեկուսացված լինելը (կույր, խուլ, համր), Աշխատանքային օրենսգրքում 2022 թվականի հուլիսի 7-ին ընդունված թիվ 296-ն փոփոխությամբ բոլոր հոդվածներում կիրառվող «հաշմանդամ» բառերը փոխարինվեցին «հաշմանդամություն ունեցող անձ բառերով»: Բայցևայնպես, ներկայումս էլ շարունակում են գործող իրավական ակտերում պահպանվել եզրույթներ, որոնք ընդունելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և արժանապատվության հարգանքի տեսանկյունից: Օրինակ՝ ՀՀ կառավարության՝ 2017 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 1317-Ն որոշումը «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» օգտագործում է «հոգեպես թերզարգացած» կամ «տարբեր շեղումների ծանր զուգակցումով հիվանդ երեխա» բնորոշումները: Խնդրահարույց է նաև օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների համաժամանակյա իրականացումը Իրավական ակտերում նման եզրույթները ոչ միայն վկայում են տվյալ երկրի իրավական համակարգի անկատարության մասին, այլև հասարակության մեջ ձևավորում են որոշակի լեզվամտածողություն, ինչ էլ իր հերթին կարծրատիպային մոտեցումների պարարտ հող է ձևավորում: Կարծրատիպային մոտեցումը և անթույլատրելի խոսքի դրսևորումները առավել մտահոգիչ են դառնում, երբ վերջիններս դրսևորվում են բժշկասոցիալական հանձնաժողովների կամ բուժհաստատությունների ներկայացուցիչների կողմից: Ուսումնասիրելով վերջին 3 տարիների ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմումները պարզ է դառնում, որ հաճախ հաշմանդամություն ունեցող անձինք բողոքներ են ներկայացնում այն հաստատությունների գործողություններից ում դիմում են իրենց իրավունքների պաշտպանության հարցերով, կամ դիմում այս կամ այլ սոցիալ-տնտեսական բնույթի հարցերով, սակայն ոչ միայն խնդրին լուծում չեն ստանում, այլ ավելին՝ ենթարկվում են վատ վերաբերմունքի, արժանապատվության նվաստացման դրսևորումների: Այնինչ, հաշմանդամություն ունեցող անձանց հետ հարաբերակցվելիս կարևոր է գիտակցել

վերջիններիս յուրահատուկ լինելու և նրանց որպես մարդկային բազմազանության մաս դիտելու հանգամանքը:

Անթույլատրելի խոսքի կիրառման մասին իր դիրքորոշումն է հայտնել նաև ՄԱԿ-ի հաշմանդամության հարցերով կոմիտեն իր մեկնաբանություններում⁴ նշելով, որ խնդրի կապակցությամբ միջազգային փորձը վկայում է, որ ոչ պատեհ ընտրված լեզվի կիրառումը կարող է խտրականության դրսևորումների, իրավունքների և հնարավորությունների ոչ իրավաչափ սահմանափակումների պատճառ լինել: Սակայն պետք է, նշել որ խնդրահարույց է շարունակում մնալ ինչպես նշված հաստատություններում անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքերը, այնպես էլ այդ անձանց՝ իրենց խախտված իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկման ընթացակարգերի մասին իրավասու մարմինների կողմից պատշաճ չիրազեկելը և բողոքների քննման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը:

Շարունակում է մտահոգիչ մնալ տարբեր հաստատությունների անվանումների կիրառման հարցում խտրական եզրույթների անթույլատրելիության հարցը՝ այն նկատառմամբ, որ դրանք թիրախավորում և պիտակավորում են տվյալ հաստատությունում բնակվող, խնամք կամ կրթություն ստացող անձանց: Չնայած, որ վերջին շրջանում Լիազոր մարմինների կողմից ընթանում են աշխատանքներ նմանատիպ հաստատությունների վերանվանումների, այդուհանդերձ, դեռևս շարունակվում են պահպանվել հաստատություններ, որոնց անվանումներում առկա են անթույլատրելի եզրույթներ, որպես օրինակ կարող ենք նշել «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի անվանումը⁵: Նշվածի օրինակով հարկ է նշել, որ անթույլատրելի է հաստատությունների անունները սահմանելիս օգտագործել եզրույթներ, որոնք ասոցացվում են՝ այնտեղ գտնվող անձանց վարքային դրսևորումների, առողջական կամ նրանց ընտանիքի սոցիալական վիճակի հետ:

⁴ <https://digitallibrary.un.org/record/1626976?ln=en>

⁵ <https://www.imdproc.am/SchoolProfile/5adafeb4-4de5-4ce2-b74c-186951acad3e>

Ուսումնասիրության են ենթարկվել Պաշտպանի կողմից վերջին շրջանում պետական մարմիններին ուղղված հարցումները, բացահայտելու համար հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերը, սակայն հարցումներին ի պատասխան պետական մարմինների կողմից նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերի վերաբերյալ բողոքներ չեն ստացել: Նշված պատկերը մտահոգիչ է առնվազն այն համադրման արդյունքում, երբ նույն հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանի աշխատակազմ են ներկայացվել դիմումներ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի, ծաղրի կամ խարանի դեպքերի վերաբերյալ: Նշվածը փաստում է, որ երևույթը ճիշտ որակելու և դրան համապատասխան արձագանքման արդյունավետ մեխանիզմ ունենալու համար անհրաժեշտ մասնագետների բավարար քանակի սղությունը, նրանց ոչ թիրախային վերապատրաստված լինելը հանգեցնում է իրավիճակների, երբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ապահովումը հաճախ պատկան մարմինների կողմից ընկալվում է, որպես պատասխանատու անձի հոգածության և բարեգթության դրսևորում, և ոչ թե պետության այլընտրանք չունեցող պարտավորություն, ինչը սկզբունքային անթույլատրելի է: Խնդրահարույց է նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամք, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ուսումնական հաստատություններում խտրականության, ծաղրի և խարանի դեպքերի բացահայտման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Այս կապակցությամբ էական կարող է լինել նմանատիպ դեպքերի բացահայտման նպատակով իրավասու մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացվող քայլերի կարևորությունը՝ անկախ բողոքների առկայությունից:

Կարծրատիպային մոտեցումների և խտրական վերաբերմունքի բացառման հարցում առանձնահատուկ ուշադրության է արժանի լրատվամիջոցների, հեռուստատեսության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց հիշատակումները, նրանց խնդիրների ներկայացման մոտեցումները: Հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող խնդիրները ճիշտ՝ արժանապատիվ և մարդու իրավունքների համընդհանուր

մոտեցումներին համապատասխան ներկայացնելու անհրաժեշտության համատեքստում հարկ է անդրադառնալ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 14-ի թիվ 90-Ա որոշմանը: Վերջինիս համաձայն՝ ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսարաններ: Ի թիվս այլնի որոշումը անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող է որակում նաև այն հեռուստառադիոհաղորդումները, որոնք ծաղրում կամ ծաղրելով նմանակում են հաշմանդամություն (ֆիզիկական և/կամ մտավոր) ունեցող անձանց: Հիշյալ կարգավորման տառացի մեկնաբանությունից բխում է, որ նշված սահմանափակումը գործում է միայն նշված ժամանակահատվածի համար և հետապնդում է բացառապես անչափահասների վրա հնարավոր բացասական ազդեցության բացառման նպատակ: Այնինչ պետության քաղաքականությունը այս ոլորտումը պետք է ուղղված լինի նման հեռուստառադիոհաղորդումները իսպառ բացառմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային և խտրական վերաբերմունքի դրսևորումների կանխարգելմանն ուղղված կարգավորումներ են նախատեսվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծով⁶: Նախագծով ի թիվս այլնի խտրականության տեսակ է դիտարկվում նաև հաշմանդամություն ունեցող անձանց խելամիտ հարմարեցումներ չտրամադրելը: Այս կապակցությամբ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի մայիսի 8-ի⁷ իր վերջնական եզրակացությունների ու առաջարկների դիտարկումներով առաջարկել է հնարավորինս արագ միջոցներ ձեռնարկել նախագծի ընդունման ուղղությամբ և ապահովել, որ վերջինս ներառի հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը և՛ հանրային, և՛ մասնավոր

⁶ <https://www.e-draft.am/projects/1801>

⁷ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/ARM/CO/1&Lang=en

ոլորտներում, խտրականության տեսակները, «խելամիտ հարմարեցումների» հասկացությունը, վերջիններիս չտրամադրումը, որպես խտրականության տեսակ, ինչպես նաև նախատեսի սանկցիաների համակարգ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման համար:

Ձեռնարկման ենթակա անհրաժեշտ գործողություններ.

- Օրենսդրական ակտերի վերանայման մեխանիզմի ներդաշնակեցում
- Նոր ընդունվող իրավական ակտերի եզրութաբանության տեսանկյունից առավել զգայուն մոտեցումների դրսևորում,
- Վերապատրաստումների անցկացում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց համար,
- Իրազեկման թերթիկների պատրաստում, այդ թվում Կոնվենցիայի մատչելի տեքստի պատրաստում
- «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի ընդունում
- Կամընտիր արձանագրության վավերացումից բխող ներպետական ընթացակարգերի ներդաշնակեցում

2. Անձի ֆունկցիոնալության և կարիքահեն ծառայությունների գնահատման համակարգի վերանայում՝ մասնավորապես բժշկասոցիալական հանձնաժողովների գործունեության համադրությամբ

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տեղեկատվության համաձայն հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են ՀՀ ազգաբնակչության մոտ 6.5 տոկոսը⁸, մեկ այլ տվյալի համաձայն՝ ԱՀԿ-ի տվյալներով աշխարհում բնակչության մոտավորապես 15%-ը (ավելի քան մեկ միլիարդ մարդ) ունի հաշմանդամություն: Նշված համամասնությունը մտահոգիչ է այն պատճառով, որ վերջինս վկայում է ՀՀ-ում հաշմանդամության գնահատման համակարգի անկատարության մասին:

⁸ https://armstat.am/file/article/sv_01_21a_530.pdf

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տարիներ շարունակ բարձրացվող խնդիրները առավելապես վերաբերում են հաշմանդամություն չսահմանելու, դրանք բողոքարկելու և արդյունքի չհասնելուն, ինչպես նաև բողոքարկելու իրավունքի մասին տեղյակ չլինելու պատճառով փորձաքննական որոշումները բողոքարկելու ժամկետները բաց թողնելու վերաբերյալ բողոքներին:

Այս և մի շարք այլ խնդիրների անդրադառնալիս Կոնվենցիան ի թիվս այլնի նշում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն ներգրավվելու քաղաքականության ու ծրագրերի, այդ թվում՝ ուղղակիորեն իրենց վերաբերող վերոնշյալ ծրագրերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացներում: Հաշմանդամությունը սահմանվում է որպես մարդու ֆիզիկական և մտավոր խնդիրների ու շրջակա միջավայրի խոչընդոտների փոխազդեցության արդյունքում գործունեության և մասնակցության սահմանափակում. հաշմանդամություն ունեցող անձ է համարվում այն անձը, որը ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական տևական խնդիրների և տարբեր արգելքների փոխազդեցության արդյունքում կարող է ունենալ մյուսների հետ հավասար հիմունքներով հասարակական կյանքին լիարժեք ու արդյունավետ մասնակցության սահմանափակում: Այս համատեքստում հաշմանդամությունն այլևս չի դիտարկվում որպես մշտական առողջական խնդիր, այլ ընկալվում է որպես գործունեության սահմանափակումների կրճատմանն ու մասնակցության ընդլայնմանն ուղղված միջամտություններ (աշխատանք, կրթություն, ընտանեկան և համայնքային կյանք, սպորտ ու մշակույթ եւ այլն)՝ շրջակա միջավայրում առկա ֆիզիկական և վերաբերմունքային խոչընդոտները վերացնելու, լրացուցիչ հնարավորություններ ստեղծելու ու ծառայություններ տրամադրելու միջոցով:

Սակայն, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում մինչև վերջերս իրականացված փոփոխությունները չէին արտացոլում Կոնվենցիայով հետապնդվող նպատակները: Մասնավորապես, գործող իրավակարգավորումների անկատարարության մասին է փաստել նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն՝ Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ իր

2017 թվականի մայիսի 8-ի եզրափակիչ դիտարկումներում:⁹ Կոմիտեն հիշատակել է այնպիսի խնդիրների մասին ինչպիսիք են՝ ՀՀ օրենսդրության խտրական կարգավորումները, որոնք թույլ են տալիս անձի մոտ հոգեւոցիալական և մտավոր անկարողությունների հիմքով անձին զրկել գործունակությունից և նշանակել խնամակալ, խոսել է նաև անձի որոշումների կայացմանն աջակցելու ռեժիմի մեխանիզմներ բացակայության մասին: Կոմիտեի կողմից ներկայացված առաջարկությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ անհրաժեշտ է վերականգնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց լիարժեք գործունակությունը և ներդնել որոշումների կայացմանն աջակցելու ռեժիմներ, որի նպատակն է անձին այն չափով աջակցության ցուցաբերումը, որը բավարար կլինի անձի կողմից ինքնուրույն որոշումներ կայացնելու համար: Այլ խոսքով ասած, պետք է ստեղծվի իրավական և գործնական այնպիսի համակարգ, որով հնարավորություն կտրվի հաշմանդամություն ունեցող անձին կայացնելու սեփական որոշումները, սակայն դրա համար վերջինս կարող է ըստ անհրաժեշտության դիմելու աջակցողին՝ պարզաբանում կամ մեկնաբանություն ստանալու հարցում, բայցևայնպես, աջակցողի օգնության տրամադրումը չպետք է կրի մշտական բնույթ, այլ պետք է կիրառվի որպես լրացուցիչ միջոց՝ անձի կողմից իր գործունակության առավելագույն դրսևորումներից հետո միայն: Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն հաշմանդամություն ունեցող անձանց կարող է տրամադրվել անձնական օգնական, օրենսդիրը, չսահմանափակելով նշված ծառայությունից օգտվելու անձի իրավունքը, այդուհանդերձ նշում է, որ կարգը ենթակա է սահմանման կառավարության որոշմամբ: Սակայն, Կառավարության 2022 թվականի թիվ 1264-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝ անձնական օգնականի ծառայությունից կարող են օգտվել հենաշարժական, տեսողական և հոգեկան (մտավոր) խնդիրներով ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակում ունեցող անձինք, ում ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ունի 10-ից բարձր անապահովության միավոր: Այսինքն, առաջարկվող լուծման պարագայում անձնական օգնականի

⁹https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/ARM/CO/1&Lang=en

տրամադրումը կրում է սոցիալական բնույթ և ոչ միշտ է համընկնելու անձի կարիքահեն մոտեցման հետ:

Անձի կարիքների և կենսագործունեության համապատասխան հաշմանդամության կարգավիճակի սահմանման առավել խորքային խնդիրի առկայությունը տարիներ շարունակ պայմանավորված են եղել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թվականին ընդունած Հայաստանի Հանրապետության օրենքով, որով սահմանվում էին հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության սկզբունքները և մոտեցումները, որոնք, սակայն չէին համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և մոտեցումներին: Հաշմանդամության սահմանման հիմքում դրված էր անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանը. հաշմանդամ են ճանաչվում հիվանդության, վնասվածքների կամ խեղման հետեւանքով կենսագործունեության սահմանափակում ունեցող անձինք:

Կենսագործունեության սահմանափակման հիման վրա հաշմանդամության սահմանումն առավելապես բխում է բժշկական չափանիշներից, այսինքն, հիմնված է բժշկական մոդելի վրա: Այս համատեքստում հաշմանդամություն ունեցող անձը դիտարկվում է որպես առողջական խնդիրներ ունեցող անձ, որը կարիք ունի պաշտպանության: Չի իրականացվում անձի կարողությունների բազմակողմանի գնահատում եւ հաշվի չեն առնվում շրջակա միջավայրի գործոնները: Գնահատման նպատակը առավելապես հաշմանդամ ճանաչել կամ չճանաչելն է, որով էլ պայմանավորված են լրացուցիչ արտոնությունները: Հաշմանդամության խումբը որոշելու համար բժշկասոցիալական փորձաքննություն անցկացնելու հիմքը սահմանված է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի՝ բժշկասոցիալական փորձաքննությունը, հիվանդության կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով և (կամ) կառուցվածքի խախտումներով պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների գնահատման հիման վրա հաշմանդամության սահմանումն է, ինչպես նաև

հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառմանն ուղղված ծառայությունների տեսակների՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումն է: Բժշկասոցիալական փորձաքննողների կողմից հաշմանդամության խմբերի սահմանման համար չափորոշիչները սահմանվում են ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշմամբ: Սակայն որոշման կիրառումը գործնականում տարեցտարի էլ ավելի է խորացնում տվյալ չափորոշիչների անկատարությունը, դրանց որոշակիության, հայեցողական մեկնաբանման հետ կապված խնդիրները:

Վերջիններիս ներկայացված առողջության վերաբերյալ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հաճախ կայացվել են որոշումներ այն մասին, որ դրանք չեն վկայում օրգանիզմի կայուն ֆունկցիաների խանգարման մասին: Այս հիմնավորմամբ հանձնաժողովների որոշումներով անձանց նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվել կամ արդեն իսկ սահմանված հաշմանդամության խումբը չի վերանայվել՝ չանդրադառնալով այն հարցին, թե արդյոք նման առողջական կամ սոցիալական խնդիրների հետևանքով մարդու կյանքի որակը փաստացի փոփոխվել է, թե ոչ:

Խնդրահարույց են նաև հանձնաժողովի կողմից կայացված որոշումների վերաբերյալ վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգերը: Հաշմանդամություն ունեցող անձանց բողոքները առավելապես վերաբերում են կայացված որոշումների բողոքարկման գործընթացում վերջինների ձևական ուսումնասիրություններին, որոնք արդյունքում որոշումները մեծամասամբ մնում են անփոփոխ, չեն իրականացվում գանգատների, տեղեկությունների վերլուծություն և արդյունքում հանգում են նրան, որ առկա պաթոլոգիայով պայմանավորված առկա են աննշան խանգարումներ, որոնք չեն հանգեցում կենսագործունեության որևէ սահմանափակման և հաշմանդամություն սահմանելու հիմքերը բացակայում են: Նշված իրավիճակում հաշմանդամություն ունեցող անձանց հաճախ առաջարկվում է դիմել վերափորձաքննության իրականացմանը, սակայն վերջինիս լրացուցիչ ֆինանսական բեռը անձանց հետ է պահում այդ գործընթացին դիմելուց:

Հաշմանդամության խումբ սահմանելու հետ կապված խնդիրներ են առկա նաև ազատությունից զրկված անձանց նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելու հարցերում: Մասնավորապես, բողոքների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ նման խնդիր են առկա փորձաքննության կազմակերպման, անհրաժեշտ հետազոտություններ ու բժիշկ-մասնագետների խորհրդատվությունները կազմակերպելու գործընթացներում: Թեև ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու կարգը սահմանում է հստակ ժամկետներ և ընթացակարգեր, այնուամենայնիվ՝ գործնականում խնդիրներ են առաջանում հետազոտությունների պատշաճ մակարդակով և ժամկետներում կատարելու հետ՝ որոշ դեպքերում դիմում ներկայացնելուց մինչև փորձաքննություն անցկացում տևել է մեկ տարի, որի պարագայում կարելի է պատկերացնել, թե ինչ անհարմարություններ է պատճառվել տվյալ անձին գործընթացի ձգձգման արդյունքում:

Հաշմանդամության կարգավիճակի սահմանման ոլորտում Պաշտպանի ստացած բողոքներն ու ահազանգերը վկայում են մի շարք խնդիրների մասին: Օրինակ, առկա են դեպքեր, երբ նույն ախտորոշման դեպքում կենսագործունեության սահմանափակման տարբեր աստիճաններ են արձանագրվում միայն այն պատճառով, որ մի դեպքում տվյալ ախտորոշումն առաջացրել է օրգանի կայուն խանգարում, իսկ մեկ այլ դեպքում՝ ոչ, թեև երկու դեպքում էլ մարդկանց կյանքի որակը վատթարացել է: Ստացվել են բողոքներ և դիմումներ այն մասին, որ ներկայացված բժշկական փաստաթղթերի բազմակողմանի և լրիվ ուսումնասիրություն չի իրականացվում, ինչպես նաև փորձաքննության ենթարկվող անձի օբյեկտիվ զննություն չի կատարվում, գնահատումը չի իրականացվում բազմամասնագիտական թիմի կողմից և այլն: Խնդրահարույց է այն, որ բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչները և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշները պարունակում են դրույթներ, որոնք հիմք են տալիս հանձնաժողովների անդամներին դրսևորել սուբյեկտիվ մոտեցումներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից հաճախ բարձրացվում են խնդիրներ կապված հանրային մարմինների կողմից վարչարարությունը թերացումներով իրականացնելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրենց իրավունքների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկելու վերաբերյալ: Մասնավորապես, խնդիրը ակնառու է, երբ հաշմանդամություն ունեցող անձինք դիմելով պետական մարմիններին և բարձրացնելու կոնկրետ անհատական խնդիր՝ ակնկալում են տվյալ մարմնից ստանալ նկարագրված կոնկրետ խնդրի վերաբերյալ դիրքորոշում կամ առաջարկվող լուծումներ: Այնինչ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների բովանդակությունից պարզ է դառնում, որ հաճախ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող պատասխաններ սուկ հղումներ են պարունակում գործող կարգավորումների և պետական մարմինների կողմից չի դրսևորվում անհատական մոտեցում: Ասվածը առավել խնդրահարույց է, քանզի քննարկվող իրավիճակներում պետական մարմնի կողմից հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ գործ ունի հաշմանդամություն ունեցող անձի հետ և որ տրվող պատասխանները պետք է լինեն առավել որոշակի և մատչելի: Գործնականում խնդիրներ են առաջանում նաև իրավասու մարմինների կողմից գործող իրավակարգավորումների վերաբերյալ թերի կամ սխալ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում, երբ անձը փաստացի զրկվում է իր իրավունքները իրացնելու հնարավորությունից՝ ոչ արժանահավատ տեղեկատվության տրամադրման պատճառով: Խնդիրն առավել սուր է արտահայտված մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում:

Այսպես, այս խնդիրների կարգավորման ուղղված 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվեց «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ինչպես նաև «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքները: Սույն օրենքները կարգավորում են վարչարարության շրջանակներում անձի ֆունկցիոնալության գնահատման, դրա սահմանափակման աստիճանը որոշելու, հաշմանդամություն ունեցող անձի ծառայությունների անհատական ծրագիրը որոշելու, գնահատման հանձնաժողովների որոշումների բողոքարկման և վերահսկողության հիմքերը և ընթացակարգերը: Նպատակն է հաշմանդամության սահմանման մոդելից անցնել

Ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, նրա գործունեության եւ մասնակցության վրա միջավայրային գործոնների ունեցած ազդեցության: Գնահատումը կիրականացվի մասնագետների ռեեստրից պատահական ընտրությամբ ձևավորված գնահատող հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են՝ բժիշկներ՝ տարբեր նեղ մասնագիտացումներով, որոնք կիրականացնեն օրգանիզմի ֆունկցիաների եւ մարմնի կառուցվածքի գնահատումը, էրգոթերապիստներ, հոգեբաններ եւ այլ մասնագետներ, որոնք կիրականացնեն անձի գործունեության եւ մասնակցության գնահատում: Հաշմանդամության խմբերի փոխարեն (1-ին, 2-րդ, 3-րդ խումբ և հաշմանդամ երեխա), սահմանվել է անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ թեթև, միջին, ծանր, խորը, իսկ գնահատումը հիմնված է ԱՀԿ ՖՄԴ գաղափարախոսության և մոտեցումների վրա:

Հուսադրող են ինչպես օրենսդրական այնպես էլ ենթաօրենսդրական ակտերում տեղ գտած կարգավորումները, չնայած այն հանգամանքին, որ սահմանված անցումային դրույթների համաձայն, օրինակ՝ բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշման դրույթները գործելու են մինչև անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները և գործիքները հաստատելու մասին 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1177-Ն որոշման ուժի մեջ մտնելը, այն է՝ 2023 թվականի փետրվարի 1-ը, այդուհանդերձ, շարունակում են խնդրահարույց մնալ ներկայումս գործող իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի իրավակարգավորումները:

Չնայած նրան, որ քննարկվող կարգերը դեռևս չեն գործարկվել և վերջինների գործողության արդյունավետությունը գնահատելու համար դեռևս ժամանակ է հարկավոր, այդուհանդերձ՝ որոշակի կարգավորումների խնդրահարույց լինելու մասին կարելի է հիշատակել անգամ վերջիններիս զուտ տեսական ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» կառավարության 2022 թվականի թիվ 1180-Ն որոշման, որը գալիս

է փոխարինելու «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» Կառավարության 2006 թվականի թիվ 275-Ն որոշումը, հավելվածի 9-րդ կետում ի թիվս այլ անձանց գնահատող հանձնաժողովի անդամ լինելու արգել պետք է սահմանվի նաև այն մասնագետի համար, ում գործողությունները գնահատվող անձի կողմից նախկինում բողոքարկվել են կամ գնահատվող անձը դիմել է նրա որոշումը փոփոխելու կամ վերագնահատելու դիմումով:

Անհրաժեշտ գործողություններ, որոնք ենթակա են ձեռնարկման.

- համապատասխան մասնագետների իրավական գիտելիքների և մասնագիտական կարողությունների կատարելագործում, որոնք ուղղված պետք է լինեն ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու գիտելիքների, խնդիրների փստորոշման, այնպես էլ բժշկասոցիալական եզրակացություններ անելու համար անհրաժեշտ փորձ և գիտելիքներ չունենալու պարագայում անձին հաշմանդամության այս կամ այն խմբին համապատասխանության մասին ուղղորդումներ չիրականացնելուն:

- Ներկայումս ընթացող բժշկասոցիալական հանձնաժողով գործունեության որոշումների թափանցիկություն, սուբյեկտիվայի ընկալումների բացառում, իրավական որոշակիության առկայություն, մասնավորապես հաշվի առնելով արդեն իսկ ընդունված, սակայն անցումային բավական երկար ժամանակ սահմանված ակտերի գործունեությունը, ինչպես նաև նոր ընդունվող ակտերում՝ մինչև այդ որոշումն ուժի մեջ մտնելը բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու դիմում ներկայացրած, սակայն դեռևս փորձաքննություն չանցած անձանց դիմումի նկատմամբ միայն նոր ընդունվող որոշմամբ սահմանված կարգը տարածելու կարգավորումը

- հիմնական ընթացակարգեր սահմանող ենթաօրենսդրական ակտերի մատչելի կարգավորումների նախատեսումը՝ հաշվի առնելով, որ ներկայումս դրանք բարդ ընկալելի են բժշկափորձագիտական ոլորտում փորձ չունեցող մարդկանց համար, և դա այն պարագայում, երբ տվյալ ակտերի օգտվել ցանկացող անձանց համար դրանք պետք է առավել մատչելի լինեն

3. Ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովում

Ֆիզիկական միջավայրի հաշմանդամություն ունեցող մարդկանց հարմարեցված չլինելու խնդիրը տարիներ շարունակ համակարգային առումով լուծում չի ստանում: Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջանային է նրանց կողմից իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից: Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն¹⁰ հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի մատչելիությունը: Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական հաստատությունների մատչելիությունը: Մատչելիությունը մանրամասնորեն մեկնաբանված է նաև Կոմիտեի Թիվ 2-ընդհանուր մեկնաբանության¹¹ մեջ: Այդուհանդերձ, մատչելիությունը ընդհանուր սկզբունք է և դրա հիմքով պարտավորությունները ներառված են Կոնվենցիայի գրեթե բոլոր նյութաիրավական հիմքերում, օրինակ՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը վերաբերում է օրենքի առջև հավասարությանը 13-րդ հոդվածը արդարադատության մատչելիությանը, որոնք ուղղակիորեն առնչվում են դատարանների մատչելիությունը: Կոնվենցիայի ուղենշային սկզբունք»-ների¹² համաձայն՝ միջավայրը պետք է մատչելի լինի հաշմանդամության բոլոր տեսակների համար: Մատչելի ֆիզիկական միջավայրն անհրաժեշտ է ոչ միայն հաշմանդամություն ունեցող մարդուն, այլև բոլորի համար, և այն ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ հետիոտների շարժը սահմանափակող խոչընդոտների վերացումը, ինչպես օրինակ՝ մայթեզրերի հարմարեցում: Այսինքն, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման

¹⁰ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762>

¹¹ <https://www.undocs.org/Home/Mobile?FinalSymbol=CRPD%2FC%2FGC%2F2&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False>

¹² <https://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm>

տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի համընդհանուր դիզայնի մոտեցումը մատչելիության առնչվող քայլերում: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի համաձայն՝ համընդհանուր դիզայնը՝ ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների դիզայնն է, որն առանց շտկումների և մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության յուրաքանչյուր անձի համար առավելագույն չափով մատչելի է դարձնում ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների օգտագործումը՝ անհրաժեշտության դեպքում չբացառելով հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար աջակցող միջոցների առկայությունը: Օրենքի մեկ այլ հոդվածի համաձայն՝ մատչելիությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցությունների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և համակարգերի, ինչպես նաև հանրության համար բաց հաստատությունների և հանրությանը մատուցվող ծառայությունների՝ մյուսների հետ հավասար հիմունքներով հասանելիությունը քաղաքային և գյուղական համայնքներում, որի նպատակը հաշմանդամություն ունեցող անձանց անկախությունը և կենսագործունեության բոլոր ոլորտներում լիարժեք մասնակցությունն ապահովելն է: Խնդրի կարևորությունն ընդգծելու համար պետք է նշել, որ ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովումն առաջնային է հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից: Արդյունքում, համակարգային առումով լուծում չստացած խնդիրը հանգեցնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթություն ստանալու, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առողջության պահպանման, մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքների ինքնուրույն իրականացման սահմանափակման:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովող ընդհանուր պահանջները, ստանդարտները, նորմերը և կանոնները մշակում և հաստատում է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեն: «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով, սահմանում է ՀՀ-ում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և

կարգավորում է այդ գործունեության հետ կապված հարաբերությունները, իսկ որոշ դրույթներում անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի անհրաժեշտությանը: Օրինակ, օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ կառավարությունը քաղաքաշինության բնագավառում ապահովում է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներից անարգել օգտվելու՝ օրենքից բխող պահանջների իրականացումը: Հաշմանդամություն ունեցող մարդկանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմերը քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգի մասն են: 2007 թվականից գործում է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարի «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» թիվ 253-Ն հրամանը, իսկ 2014 թվականից գործում է ՀՀ քաղաքաշինության 27 նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի թիվ 103-Ն հրամանը «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին, որում առանձին բաժնով սահմանված են հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը:

Ասվածի համատեքստում հարկ է շեշտադրել, որ **Ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումը՝ միայն թեքահարթակների առկայությունը չէ:**

Խոսելով ֆիզիկական մատչելիության խնդիրների մասին ցավով պետք է արձանագրել, որ գործնականում խնդիրը կամ առհասարակ լուծում չի ստանում, որովհետև հիմնական շենքեր շինությունները, քաղաքային ենթակառուցվածքները, որոնք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար բավականին հին են և դրանցում այլևս հնարավոր չեն իրականացնել վերակառուցման և հարմարեցման աշխատանքներ, կամ նախատեսվում են կարգավորումներ՝ ժամանակավոր կամ հատվածական լուծումների տեսքով, օրինակ՝ տեղադրել շարժական թեքահարթակներ, որոնք որոշ ժամանակ անց ապամոնտաժվում են կամ շինությունում հարմարեցումների տեսանկյունից առկա է միայն թեքահարթակ (սանհանգույցային հարմարությունները բացակայում են, շենքերի ներսում հնարավոր չէ տեղաշարժվել): Խնդիրը, հատկապես սուր է դրված այն հաստատություններով, որոնք

նախատեսված են հենց հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն այդ հաստատություններ մուտք գործելը սկսած այդ շինությունների մուտքերից, մուտքի դռներից մինչև ներսում տեղաշարժվելու պայմաններ բնավ հարմարեցված չեն այդ անձանած համար, և տեղաշարժման միակ հնարավորությունը աշխատակիցների աջակցությունն է, իսկ խնդիրների լուծման համար պետությունը ոչ միշտ է նախատեսում համապատասխան ֆինանսական հատկացումներ: Անհրաժեշտ է նաև խնդիրը դիտարկել քաղաքային ենթակառուցվածքների մատչելիության համատեքստում, քանզի այն ֆիզիկական մատչելի միջավայրի առկայությունը, որին ձգտում ենք մենք բոլորս պետք է ոչ միայն սահմանափակվի բնակելի տների, աշխատավայրերի, հասարակական նշանակություն շինությունների, այլև փոխադրամիջոցների, ճանապարհների, մայթերի, փողոցների հասանելիությամբ: Օրենքում մատչելիությունը սահմանված է որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման ու պաշտպանության պետական քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն է:

«Կառավարության «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» 2007 թվականի հունիսի 28-ի թիվ N 955-Ն որոշման համաձայն՝ ճանապարհների վրա կույր հետիոտների հաճախակի գտնվելու վայրերում, երթևեկելի մասը հատելու հնարավորության մասին նրանց տեղեկացնելու համար լուսացույցի կանաչ լուսային ազդանշանը կարող է ուղեկցվել տրանսպորտային միջոցների ձայնային (հատուկ) ազդանշաններից տարբերվող ձայնային ազդանշանով: Նույն որոշման մեկ այլ՝ ի թիվս այլնի լրացուցիչ նշանների կիրառվում են «Կույր հետիոտներ» նշանը, որը տեղեկացնում է, որ հետիոտնային անցումից օգտվում են կույրերը: Չնայած նրան, որ դրական է գնահատվում պետության կողմից հաշմանդամության նշված տեսակ ունեցող անձանց համար միջավայրային հարմարեցումներ ապահովելուն ուղղված իմպերատիվ կարգավորումների նախատեսման հրամայականը, այդուհանդերձ հարկ է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ պետության քաղաքականությունը ուղղված է կարգավորումների կիրառմանը այնպիսի վայրերում, որտեղ նշված անձինք հաճախակի

են լինում, և այդպիսի վայրերում էլ տեղադրվում են հատուկ ցուցանակներ: Այնինչ, առաջարկվող լուծումները պետք է կրեն համընդհանուր բնույթի՝ հնարավորություն ընձեռելով հաշմանդամություն ունեցող անձին հավասարապես օգտվել բոլոր ենթակառուցվածքներից:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների բովանդակության ուսումնասիրությունից ևս պարզ է դառնում ֆիզիկական միջավայրի մատչելիության մի շարք խնդիրներ՝ մասնավորապես ստորգետնյա և վերգետնյա անցումների, թեքահարթակների բացակայության կամ առկայության դեպքում լայնություն և անկյան նորմատիվային պահանջներին անհամապատասխանության մասին և այն:

Այսպես, 2021թ. իրականացվել է ուսումնասիրություն հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդիրներով պայմանավորված ընդհանուր 13 դեպքով, որից 10-ով քննարկումը իրականացվել է անհատական բողոքների հիման վրա և վերաբերել են 2021թ. տեղի ունեցած ընտրություններին մասնակցությանը: Նշյալ 10 անհատական բողոքների մեծ մասի խնդիրները վերաբերել են ընտրատեղամաս հասնելու անհնարինությանը, այդ թվում՝ բնակության վայրից դուրս գալուն: Մի քանիսով խնդիրը եղել է ընտրատարածքներում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ շենքային պայմանների բացակայությունը: Քաղաքացիների՝ ընտրություններին մասնակցելու իրավունքն ապահովելու նպատակով 10 անհատական բողոքներից 7-ով խնդիրներին տրվել են ժամանակավոր լուծումներ, սակայն, ընդհանուր առմամբ ֆիզիկական մատչելիության խնդիրը չի լուծվել: Մնացած 3 դեպքերից 1-ը քննարկվել է անհատական դիմում-բողոքների հիման վրա, իսկ 2-ը՝ սեփական նախաձեռնությամբ: 2021թ. ուսումնասիրված բողոքներից 1-ի ուսումնասիրությունը սկսվել է 2020 թվականին: Այսպիսով, չհաշված ընտրություններին մասնակցելու իրավունքն իրացնելու նպատակով ներկայացված դիմումները՝ 2021թ. ներկայացվել է 1 դիմում-բողոք:

2022թ. ուսումնասիրվել է հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդիրներով պայմանավորված ընդհանուր 5 դեպք, որից 2-ը

շարունակվել են նախորդ տարիներից: Մնացած 3 դեպքերից 1-ով ուսումնասիրությունն իրականացվել է անհատական դիմումի, 1-ով՝ հասարակական կազմակերպությունից ներկայացված դիմումի հիման վրա, իսկ մյուսով՝ սեփական նախաձեռնությամբ:

2021-2022թթ. Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացված դիմում-բողոքներից 3-ով դիմել է համապատասխան տեսչական մարմին, որոնցից 2-ով տեսչական մարմինը վերահասցեագրել է քաղաքապետարան: Դրանցից 1 դեպքով իրավախախտի նկատմամբ քաղաքապետարանի կողմից նշանակվել է տուգանք: 1 դեպքով տեսչական մարմնի ուշադրությունը հրավիրվել է ՄԻՊ աշխատակազմի կողմից շենքի կառուցման փուլում հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիությունն ապահովելու անհրաժեշտության խնդրի հասցեագրմանը:

2020թ. շենքային պայմանների ստուգման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է **11 այց**, իսկ 2021թ.՝ **25 այց**, որի ընթացքում արձանագրվել են նաև մատչելիության այլ տեսակների խնդիրների դրսևորումներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի վերաբերյալ 2021-2022թթ. ստացվել են դիմում-բողոքների բանկերի կողմից որոշակի խախտումների վերաբերյալ: Խնդրի լուծման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը համագործակցել է Կենտրոնական բանկի հետ՝ ներկայացնելով խնդիրները:

Նշված վիճակագրական տվյալները, երբեմն, նաև խոսում են այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձինք շատ հազվադեպ են բարձրաձայնում ֆիզիկական մատչելիության խնդրի մասին՝ մտքում ունենալով խնդրի հնարավոր լուծումների բացակայության կանխավարկածը:

Շենք շինությունների ֆիզիկական մատչելիության համատեքստում կարևոր է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը առ այն, որ չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծումը, շինարարությունը և

վերակառուցումը (հանրային նշանակության շենքերի և շինությունների դեպքում նաև հիմնանորոգումը), եթե իրականացման արդյունքները չեն համապատասխանելու համընդհանուր դիզայնի սկզբունքներին կամ այլ կերպ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործման համար: Բացի այդ, «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ գործում է պատասխանատվությունը շինարարության ընթացքում հաստատված նախագծի, շինարարական արտադրության կամ ընդունման նորմերի, ինչպես նաև ստանդարտների խախտումներ թույլ տալու դեպքում: Ստացվում է, որ օրենսդիրը վերահսկողության և պատասխանատվության պահանջ է նախատեսել շինարարության ընթացում խախտումների համար: Ավելին, 2021 թվականի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նախատեսվել է պատասխանատվություն բնակավայրերի նախագծման ու կառուցապատման, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծման, շինարարության և վերակառուցման (հանրային նշանակության շենքերի և շինությունների դեպքում՝ նաև հիմնանորոգման) դեպքում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը չպահպանելու համար առաջին անգամ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկից երեքհարյուրհիսնապատիկի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում, հիշատակված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը կամ չվերացնելու դեպքում տուգանք է նշանակվում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:

Շենքերի՝ ֆիզիկական մատչելիության կապակցությամբ Պաշտպանի կողմից հրապարակվող տարեկան հաղորդումներում հաճախ հիշատակվում է շենքերի մուտքերի մատչելիությունն ապահովող լուծումների արդյունավետության մասին, մասնավորապես, խնդիրը պետք է դիտարկվի պետության պոզիտիվ պարտավորության կատարման համատեքստում: Ընդ որում՝ կարևոր է, որ մուտքերի մատչելիությունը պետք է ապահովվի այնպես, որ հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն

տեղաշարժվելու իրավունքը հնարավոր լինի իրացնել արժանապատիվ կերպով, առանց լրացուցիչ, կողմնակի աջակցության անհրաժեշտության, այլոց հետ հավասար հիմունքներով: Պաշտպանի կողմից բարձրացված խնդիրների համատեքստում համապատասխան մասնագետների կողմից լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտություն է առկա ինչպես շենքերի մուտքերի՝ վերջիններս չպետք է տարանջատված լինեն այնպես, որ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովվի մեկ, իսկ այլոց համար մեկ այլ մուտքով՝ անկախ այն հանգամանքից, թե առաջարկվող մուտքը որքան մատչելի է հաշմանդամություն ունեցող անձի համար, այնպես էլ առհասարակ շենքերի մատչելիության գնահատման տեսանկյունից: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունի հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ներգրավվումն իրենց առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում: Այս կերպ հնարավոր է նաև փոխել առկա կարծրատիպերը հաշմանդամության վերաբերյալ:

2021 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 1621-Լ որոշմամբ հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը¹³: Որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկի որոշ միջոցառումների կատարումը մտահոգիչ են՝ վերջիններիս արդյունավետության և չափելիության տեսանկյունից: Մասնավորապես, միջոցառումների 2.1-ին, 3.1-ին, 3.2-րդ, 3.3-րդ կետերով նախատեսվում է՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերում, նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հարմարեցում հաշմանդամություն ունեցող սաների կարիքներին, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար սեմինարների, փորձի փոխանակման հանդիպումների կազմակերպում, դպրոցների շենքային պայմանների բարելավում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների հարմարեցում և այլն: Ինքնին նման գործողությունների

¹³ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=156446>

Նախատեսումը տրամաբանական է՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման տեսանկյունից, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը հիշատակված ծրագրերը հաստատվում են տարեկան կտրվածքով՝ հետևաբար և արդյունքային ցուցանիշների տեսանկյունից ևս պետք է լինեն իրատեսական և չափելի: Որոշման նախագծման փուլում Պաշտպանի աշխատակազմի կողմից առաջարկվել է նախատեսվող միջոցառումների համար սահմանել նվազագույն քանակական կամ որակական չափելի ցուցանիշներ, որը հնարավորություն կտա նաև Պաշտպանին իր մանդատի շրջանակում՝ կոնվենցիայի պահանջների կատարման մոնիթորինգի նպատակով գնահատել պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովմանը միտված քայլերի արդյունքների արդյունավետությունը, վեր հանել խնդիրները և առաջարկել հետագա բարելավումներ: Նշված առաջարկի համատեքստում, չափելի ցուցանիշ է սահմանվել միայն 3.2-րդ միջոցառման համար՝ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 20%-ի վերապատրաստում:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի «Իրավահավասարություն, խտրականության արգելք», «Առողջության պահպանման իրավունք» և «Կրթության իրավունք» նպատակներում ամրագրվել են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանն առնչվող ռազմավարական մի շարք միջոցառումներ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասանելի աղբյուրներում դեռևս հրապարակված է ռազմավարության գնահատումը՝ հետևաբար նախատեսված միջոցառումների իրացվածության մասով դեռևս հնարավոր չէ գնահատական տալ:

Ֆիզիկական մատչելիության խնդիրներ են հանդիպում հատկապես՝

Նախակրթական, Հանրակրթական և Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական հաստատություններում: Մարդու իրավունքների պաշտպանը իր տարեկան հաղորդման մեջ ներկայացրել է, որ մշտադիտարկումների արդյունքում արձանագրվում է՝ Հայաստանի ոչ բոլոր մարզերում են 2020 թվականի

ընթացքում իրականացվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխանող հարմարեցումներ: Կարևորելով ՀՀ մարզերում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատչելիության ապահովման ուղղությամբ ձեռնարկված որոշ քայլերը՝ Պաշտպանն արձանագրել է, որ խնդրի կարգավորման նպատակով բացակայում է պետական միասնական պրակտիկա և մոտեցում:

««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն ՀՀ օրենքը նախատեսում է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում ներդնել համընդհանուր ներառական կրթության համակարգը: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող երեխաների՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ չհաճախելը պայմանավորված է նախ՝ տրանսպորտային միջոցների անմատչելիությամբ, և երկրորդ՝ առկա է շենքային պայմանների անմատչելիության խնդիր: Մասնավորապես, բազմաթիվ են դեպքերը, երբ բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, բացակայում են հարմար սանհանգույցները: Շենքերը նաև հարմարեցված չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող անձանց համար (բացակայում են, օրինակ՝ գունային գծանշումներ և այլն): Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև իր տարեկան հաղորդումներում՝ նշելով ֆիզիկական միջավայրի մատչելիության հարցը՝ որպես համակարգային խնդիր ավելի խորքային է այն պատճառով, որ այն հանգեցնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթություն ստանալու մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքների ինքնուրույն իրականացման սահմանափակմանը: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների իրականացրած մշտադիտարկման այցերի ընթացքում, որպես արձանագրված խնդիրների լուծում, հատուկ դպրոցների տնօրենները նշել են անձնական օգնականի առկայությունը:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առանց

խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի բարձրագույն կրթությունը: Այսպիսով, Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում և հայտարարություններում տարիներ շարունակ վերահաստատում է այն դիրքորոշումը, որ ֆիզիկական մատչելիության խնդիրը շարունակում է համակարգային առումով չլուծված մնալ և որ մի շարք դեպքերում հարմարեցումները սահմանափակվում են միայն թեքահարթակների կառուցմամբ, իսկ վերահսկողական մեխանիզմները գործնականում բավարար արդյունավետ չեն, խելամիտ հարմարեցումները ոչ միշտ են իրականացվում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան:

Ղատարանների շենքային պայմաններ: Բազմազան են ղատարաններում ֆիզիկական խոչընդոտները, ինչպես շենք մուտք գործելիս, նեղ միջանցքներով մինչև նիստերի դահլիճ հասնելիս, այնպես էլ ղատարանների շենքներում ամենատարրական զուգարանային պայմաններից օգտվելիս: Շատ հաճախ՝ կախված անձի հաշմանդամության տեսակից, տվյալ ղատարանի նիստերի դահլիճների հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիության աստիճանից, ազատ դահլիճներ առկայություններից՝ կոնկրետ դեպքերում տրվում են իրավիճակային լուծումներ: Մասնավորապես, փոխվում է նիստերի դահլիճի տեղը (2-րդ հարկից տեղափոխվում են առաջին հարկ), դատական կարգադրիչները գրկած տեղափոխում են հաշմանդամություն ունեցող անձին (նշվածը չարաշահումների տեղ կարող է տալ և ոտնահարել անձի արժանապատվությունը և անձը կարող է ենթարկվել արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի): Կարծում ենք, որ առավել տրամաբանական և կազմակերպ կարելի է իրականացնել անձի ղատարանից ֆիզիկական մատչելիության տեսանկյունից օգտվելու իրավունքը: Յուրաքանչյուր անգամ իրավիճակային լուծումները փնտրելու, դատական նիստերը ձգձգումներով սկսելու, հաշմանդամություն ունեցող անձանց լրացուցիչ անհարմարություն պատճառելու խնդիրներից խուսափելու համար առավել տրամաբանական կլինի մինչև դատական նիստի նշանակումը պարզել դատավարության մասնակիցների ֆիզիկական մատչելիության սահմանափակումները և նիստերի դահլիճների ժամանակացույցերը

կազմելիս հաշվի առնել նշված անձանց մասնակցությամբ նիստերը առավել մատչելի դահլիճներում կազմակերպելու հնարավորությունը:

Հանրային փոխադրամիջոցների մատչելիությունը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը տրանսպորտային միջոցների մատչելիության հարցին անդրադարձել է նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ զեկույցում՝ նշելով, որ ՀՀ-ում համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ միջմարզային և քաղաքային տրանսպորտային միջոցներում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրը: Հարցը, հատկապես խնդրահարույց է մարզերում: Ըստ զեկույցի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարզաբանումները վկայում են, որ մարզերում հարմարեցված հասարակական տրանսպորտային միջոցներ չկան: Պաշտպանը նաև մտահոգություն է հայտնել, որ շարունակվել է չլուծված մնալ Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը:

Մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց խմբերի համար պետք է նախատեսված լինի՝ անկախ նրանից այդ միջավայրում հաշմանդամություն ունեցող անձ կա, թե՛ ոչ: Կառուցվող շենքերը պետք է ի սկզբանե կառուցվեն մատչելիության չափորոշիչներին համապատասխան, իսկ խելամիտ հարմարեցումներ բխեն կոնկրետ անձի անհատական պահանջներից:

Ձեռնարկման ենթակա անհրաժեշտ գործողություններ

- Թե կրթական և դատարանների շենքերի ֆիզիկական մատչելիության ապահովման տեսանկյունից միասնական պետական քաղաքականության մշակում, միասնական նորմատիվ իրավական կարգավորումների առկայություն
- Նախագծման փուլում գտնվող Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող նոր գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներում նկատի ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների առնչվող միջոցառումների նախատեսման անհրաժեշտությունը
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության գնահատման փորձագիտական աշխատանքի իրականացում

Ֆիզիկական միջավայրային գործոնների ուսումնասիրություն, գնահատում և հասանելիության դիտարկում հաշմանդամություն ունեցող անձանց տարբեր խմբերի (սայլակով, քայլակով տեղաշարժվող, տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար և այլն) տեղաշարժման համար առկա կարիքների բավարար տեսանկյունից:

- Մինչև ամբողջապես ներառական միջավայր ունենալու նպատակի իրագործում կոնկրետ իրավիճակներով պայմանավորված տեղային լուծումներ ձեռնարկել, օրինակ՝ դատարանների մատչելիության ապահովման նպատակով հնարավորության սահմաններում միջոցներ ձեռնարկել նախապես պարզելու հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը դատական նիստին և ձեռնարկել համապատասխան միջոցները մատչելի միջավայրի ապահովման: